

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

**ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ**  
**(Периодический сборник научных статей)**

**№ 13**

**Ереван**  
**Издательство ЕГУ**  
**2017**

**YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES  
(scholarly periodical journal)**

**№ 13**

**YEREVAN  
YSU PRESS  
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),  
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն  
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,  
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-  
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն  
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,  
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով  
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան  
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր  
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան  
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր  
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր  
(Ուզբեկստան)

**ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Լեզուն, հանդիսանալով մարդկանց միջև հաղորդակցությունն ապահովելու կենդանի միջոց՝ ժամանակի ընթացքում անընդհատ զարգանում, կորցնում է որոշ տարրեր, բայց միևնույն ժամանակ նաև ձեռք բերում նորերը: Լեզուների փոխազդեցության միջոցով լեզվական ձևայինների և բառերի այսպիսի անցումները մի լեզվից մյուսին կոչվում են փոխառություններ: Լեզվում փոխառությունների ներթափանցելու պատճառներից են նոր հասկացությունների և իմաստների առաջացումը, հասարակական նոր հարաբերությունների ստեղծումը, նոր մշակույթի և կրոնի ընդունումը, գիտության զարգացումը և այլն: Փոխառություններն իրենց հետ բերում են փոխատու լեզվին բնորոշ գաղափարներ, հասկացություններ: Փոխատու լեզվի բառը փոխատու լեզվում կարող է նաև մտնել տվյալ լեզվի բառակազմական կաղապարների մեջ՝ դառնալով ածանցման կամ բառաբարդման բաղադրիչ: Բառապաշարը լեզվի այլ մակարդակների համեմատությամբ ավելի հաճախ է ենթարկվում փոխառության: Սակայն լեզուների երկարատև և սերտ փոխազդեցությունները կարող են հանգեցնել նաև լեզվի այլ տարրերի փոխառությանը, ինչպիսիք են՝ ածանցները և քերականական ձևայինները:

Պատմության ընթացքում թուրքերենին են անցել բազմաթիվ փոխառություններ տարբեր լեզուներից. ինչպես արաբերենից ու

պարսկերենից, այնպես էլ արևմտյան լեզուներից, այդ թվում՝ հունարենից, իտալերենից, սլավոնական լեզուներից, ֆրանսերենից, գերմաներենից, անգլերենից և հայերենից: Ամենամեծ քանակը կազմում են արաբերենից և ֆրանսերենից արված փոխառությունները, իսկ թվով երրորդը պարսկական փոխառություններն են:

Թուրքերենի և պարսկերենի փոխազդեցությունները պայմանավորել են ինչպես աշխարհագրական դիրքը, այնպես էլ իսլամական մշակույթի մաս կազմելը: Մելջուկյան սուլթանության, իսկ այնուհետև Օսմանյան կայսրության, ինչպես նաև սկզբունկունների և կարա-կոյունլուների պետական կազմավորումների մեջ համախմբված օղուզական ու թուրքմենական ցեղերն արաբերեն ու պարսկերեն լեզուների բարդ ազդեցությունը կրել են թե՛ թյուրքական ցեղերի և արաբների ու պարսիկների միջև անմիջական շփումների արդյունքում, և թե՛ օղուզ-թյուրքերի կողմից իսլամի ընդունումից հետո կրոնի, գիտական ու գեղարվեստական գրականության գործոններով պայմանավորված արաբապարսկական լեզվական «օկուպացիայի» միջոցով<sup>1</sup>: Պարսկերենը, որը Մելջուկյան պետության ժամանակաշրջանից ի վեր տարածաշրջանում մշակութային լեզու էր համարվում, մեծ ազդեցություն է ունեցել թյուրքական մշակույթի վրա, որի շնորհիվ էլ մեծ թվով պարսկերեն բառեր են ներմուծվել: Իսկ օսմանյան շրջանում պարսկերենի դերը ավելի է մեծացել, որը շարունակվել է մինչև քեմալական հեղափոխության ժամանակաշրջանը:

1932 թ. Աթաթուրքը ձեռնարկեց լեզվական աննախադեպ հեղաշրջում, որի արդյունքում արաբա-պարսկական բառերը

<sup>1</sup> Ալ. Սաֆարյան, «Չիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012, էջ 55:  
սեւ նաև՝ Ziya Gökalp, “Türkçülüğün Esasları”, Dördüncü basılış, Varlık Yayınevi, İstanbul, 1961, s. 193.

պիտի փոխարինվեին թուրքերեն համարժեքներով: Նախատեսվում էր հին թուրքական բառերը կրկին շրջանառության մեջ դնել, ուսումնասիրել թուրքերենի կառուցվածքը, բառարմատներն ու ածանցները և դրանց հիմքի վրա կառուցել նոր՝ արդեն թուրքական ծագմամբ բառեր: Բնական է, որ այս ամենի արդյունքում իրանական փոխառությունների թիվը կրճատվել է, և պարսկերենի դերը սկսել է նվազել:

Թուրքերենում առկա է 1363 պարսկական փոխառություն, սակայն Դյորֆերը իր աշխատության մեջ առաջ է քաշում 1727 փոխառություն պարսկական փոխառության գոյության վարկածը<sup>2</sup>:

Պարսկերենից թուրքերենին անցած բառերը շատ բազմաբնույթ են. գրեթե ցանկացած ուղորտին վերաբերող փոխառություններ կան: Մեծ թիվ են կազմում կրոնական բնույթի փոխառությունները, քանի որ թուրքերեն իսլամ են ընդունել հենց իրանցիների միջոցով: Այս բառերի մեծ մասը, ներթափանցելով գրական թուրքերեն, ամեն կերպ հարմարեցվել է թուրքերենի հնչյունական առանձնահատկություններին<sup>3</sup>:

Սելջուկյան տիրապետությունում պաշտոնական և մշակութային լեզուն պարսկերենն էր, որը համարվում էր ավելի բարձրաշխարհիկ և հնարավորություն էր տալիս ավելի լավ արտահայտելու գրավոր միտքը<sup>4</sup>: Թեպետ պարսկերենն ավելի շատ հանդես է եկել որպես գրականության լեզու, իսկ կրոնական տերմիններն էլ մեծամասամբ փոխառվել են արաբերենից, այնուամենայնիվ, մեծ քանակությամբ իսլամին և առհասարակ կրոններին առնչվող բառեր են անցել պարսկերենից: Կրոնական

<sup>2</sup> G. Dörfer, Türkische und Mongolische Elemente im Neupersischen, 4 Band, Wiesbaden, 1963.

<sup>3</sup> S. Özçelik, ‘Türkçede’ki Farsça Kelimelerde Görülen Ses Olayları’, Türk Dili, Ankara, 2002 s, 612.

<sup>4</sup> J. P. Roux, Türklerin tarihi. Pasifik’ten Akdeniz’e 2000 Yıl, 2008, s. 258.

բնույթի բառերը փոխառված են ինչպես անմիջականորեն պարսկերենից, այնպես էլ՝ վերջինիս միջոցով միջնորդավորված արաբերենից<sup>5</sup>: Այդ է պատճառը, որ արաբական ծագում ունեցող շատ բառեր թուրքերենում ստացել են պարսկերենի հնչյունական առանձնահատկությունները, մասնավորապես՝ արաբերենի ح (*ha*), ذ (*qay*), ث (*uk*), ص (*uuaḡ*), ض (*ḡaaḡ*), ع (*ayḡn*) տառերի պարսկական տարբերակներով արտասանությունը:

Բացի բառային փոխառություններից գրական թուրքերենի ձևավորմանն են նպաստել նաև շարահյուսական որոշ կառույցներ, որոնցից ամենահաճախ հանդիպողը իզաֆեթն է<sup>6</sup>: Ժամանակակից թուրքերենում պահպանվել են բազմաթիվ կայուն բառակապակցություններ, որոնք կապակցված են պարսկական իզաֆեթով: Սկզբում դրվում է հատկացյալը, որին նոր հաջորդում է հատկացուցիչը, իսկ հատկացյալին ավելանում է *kesre-i izâfet* (كسرة اضافة), որը կարդացվում է որպես *h* կամ *ḡ*: Նման կայուն բառակապակցություններն ավելի շատ պահպանվել են կրոնական տերմիններում. *ahd-i cedit- աստվածաշունչ*, *ahkâm-i din- կրոնական օրենքներ*, *amel-i sâlih- բարի գործ*, *beyt-i atik- քաարա*, *edille-i şer'îye- կրոնական փաստարկներ*, *ehl-i hadis- հադիսներ իմացող՝ մուհադդիս*, *ehl-i beyt- մուհամեդի ընտանիքը և մոտ քարեկամները*, *ehl-i kitâb- հուդայականներն ու քրիստոնյաները*, *emr-i hak- մահ*, *eşref-i mahlûkât- պատվավոր մարդ* և այլն<sup>7</sup>:

Կան նաև արաբերեն և պարսկերեն բաղադրիչներից բաղկացած կայուն բառակապակցություններ, ինչպես օրինակ՝ *âb-i hayat-կյանքի ջուր*, *dindar-հավատացյալ*, *şeyhülislâm-շեյխուլիսլամ*, *tarafgir (taraf-gir)- կողմնակալ* և այլն<sup>8</sup>:

<sup>5</sup>İnsanoğlu E., “Cross-Fertilization between Arabic and other Languages of Islam”, The Different Aspect of Islamic Culture, Volume 5, UNESCO publishing, p.111

<sup>6</sup> А. Кононов, Грамматика турецкого языка, Москва, 1941, стр. 180.

<sup>7</sup> “Dini Terimler Sözlüğü”, Devlet Kitapları Müdürlüğü, Ankara

<sup>8</sup> Նույն տեղում



Կրոնի միջոցով ներթափանցել են նաև բազմաթիվ բուն պարսկական փոխառություններ, ինչպիսիք են՝ *abdest-ծիսական լվացում*, *âsîâne-թեքքե*, *bahşîş- պարզև*, *çarmîh- խաչ*, *çeşme-ցայտաղբյուր*, *çeşme-i hâverî- արև*, *çile-տառապանք*, *çilekeş-տառապայալ*, *dergâh-դերվիշների կացարան*, *dervîş-դերվիշ*, *dost-ընկեր*, *բարեկամ*, *dürüst-ճիշտ*, *ուղիղ*, *hasta- հիվանդ*, *hizmet-ծառայություն*, *kalender- ճգնափոր*, *kümbet-զմբեթ*, *namaz-նամազ*, *nankör-անշնորհակալ*, *niyaz-աղերս*, *խնդրանք*, *peri-փերի*, *peygamber-մարգարե*, *pîr- մուսուլմանական միաբանության հիմնադիր*, *post-կաշի*, *put-պաշտամունքի առարկա*, *putperest-հեթանոս*, *rint- զվարճասեր*, *sarhoş- հարբած*, *serbest- ազատ*<sup>9</sup>:

Պարսկերենից թուրքերենին են անցել նաև նստակյաց կենցաղին և հողագործությանը վերաբերող շատ բառեր<sup>10</sup>, քանզի մինչ թուրքերի՝ Փոքր Ասիայում հայտնվելը, նրանք վարում էին քոչվորական կյանք, ուստի լեզվում առկա չէր քոչվորական կյանքին ոչ հատուկ բառապաշար, ինչպես օրինակ՝ *bağ-խաղողի այգի*, *bahçe-այգի*, *bostan-բանջարանոց*, *çavdar- տարեկան*, *harman-կալսում*, *hiyar-վարունգ*, *karpuz-ձմերուկ*, *mercimek- ուսպ*, *meyve-միրգ*, *nar-նուռ*, *nohut-սիսեռ*, *pirinç-բրինձ*, *rençper-բանվոր*, *sarpın-հացահատիկ պահելու համար փոս*, *sebze-բանջարեղեն*, *şalgam-շաղգամ*, *şeftali-դեղձ*, նաև ճաշատեսակների ու մթերքների անվանումներ. *çorba-սպուր*, *erişte-արիշտա*, *leblebi-տապակած սիսեռ*, *maya-խմորիչ*, *nan- հաց*, *nişasta-օսլա*, *peynir-պանիր*, *pilav-փլավ*, *reçel-մուրաբա*, *şeker-շաքար*, *şekerpare- քաղցրավենիքի տեսակ*, *hoşaf-կոնյուս*:

<sup>9</sup> Նույն տեղում

<sup>10</sup> Երեմեն Դ., «Թուրքերի ծագումը», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1975, էջ 311:

Վրաններից անցում կատարելով նստակյաց բնակարաններին՝ պարսկերենից վերցվել են նաև կացարանների կառուցման և ներքին պարագաների հետ կապված տերմիններ. *avize- ջահ, baca-վառարանի ծխնելույզ, cam- ապակի, duvar-պատ, merdiven-աստիճան, pencere- պատուհան, perde-վարագույր, pervaz-շրջանակ, siper-ծածկ, tahta-տախտակ*:

Պարսկերեն բառերը թուրքերենում իրենց ճկուն դերն են ունեցել և նույնիսկ մասնակցել են բառակազմական գործընթացներին, այդ իսկ պատճառով դրանք շատ են նաև բարդ բառերում, որտեղ հանդես են գալիս թուրքերեն, արաբերեն և նույնիսկ եվրոպական լեզուների բառերի հետ միասին՝ որպես բարդ բառի բաղադրիչներ:

Ստորև ներկայացված են, թե բառարմատների և ածանցների ինչպիսի համադրությունների տարբերակներ են հանդիպում:

Թուրքերեն և նրան հաջորդող պարսկերեն արմատներից կազմված բառեր. ամենից հաճախ հանդիպում է, օրինակ, “hane”- «տուն» բառը, հեշտությամբ համադրվելով թուրքերեն արմատների հետ, ստեղծում է տեղ ցույց տվող գոյականներ՝ *batakhane (batak+hane), doğumhane (doğum+hane), tophane (top+hane), yatakhane (yatak+hane), yazihane (yazi+hane), yemekhane (yemek+hane)*<sup>11</sup>: *Կան նաև այլ արմատներով կազմված բարդ բառեր, օրինակ՝ başhemşire (baş+hemşehire), beyzade (bey+zade), boyahane (boya+hane), ilkbahar (ilk+bahar), sonbahar (son+bahar), և այլն*<sup>12</sup>:

Պարսկերեն և թուրքերեն արմատներից բաղկացած բառեր. այս դեպքում երկրորդ՝ թուրքերեն բաղադրիչը, հաճախ լինում է բայ, ինչպես՝ “*etmek*”, “*olmak*”, “*geçmek*”, “*eylemek*”: Օրինակ՝ *Bahşetmek (bahş+etmek), miralay (mir+alay), vazgeçmek (vāz+geçmek)*,

<sup>11</sup> Dursunoğlu H., Türkiye Türkçesindeki Farsça Sözcükler ve Kullanım Şekilleri, Atatürk Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, 2009, 13 (1)

<sup>12</sup> նույն տեղում

*zehretmek* (*zehr+etmek*), *zehreylemek* (*zehr+eylemek*), *zehrolmak* (*zehr+olmak*) և այլն:

Ինչպես արմատները, այնպես էլ պարսկերենից փոխառված ածանցները լայն կիրառություն են ունեցել և հանդես են եկել բազմաթիվ ածանցավոր ու բարդ-ածանցավոր բառերի կազմում, որոնցից է առավել հաճախ հանդիպող և ճկուն կիրառություն ունեցող “-baz” դերբայական ածանցը՝ *dilbaz* (*dil+bāz*), *düzenbaz* (*düzen+bāz*), *kuşbaz* (*kuş+bāz*)<sup>13</sup>, ինչպես նաև “-tar”, “-zede”, “-gâh”, “-vari”, “-güzar”, “-keş” ածանցները, օրինակ՝ *bayraktar* (*bayrak+dâr*), *borazan* (*boru+zen*), *depremzede* (*deprem+zede*), *işgüzar* (*iş+guzâr*), *ordugâh* (*ordu+gâh*), *tuğrakeş* (*tuğra+keş*), *Türkvari* (*Türk+vârî*)<sup>14</sup> և այլն:

Արաբերեն և պարսկերեն փոխառություններից կազմված բառեր. կարելի է բաժանել երեք ենթախմբի:

ա) Արաբերեն և պարսկերեն բառարմատներից կազմված բարդ բառեր. այստեղ առաջին բաղադրիչը կամայական արաբերեն բառ է, իսկ երկրորդ բաղադրիչը հիմնականում պարսկերեն հետևյալ բառերից որևէ մեկն է՝ “*hane*”, “*name*”, “*güzar*”, “*perest*”, “*perver*” և այլն: Օրինակ՝ *asilzade* (*asîl+zâde*), *beyanname* (*beyân+nâme*), *dershane* (*ders+hâne*), *eczane* (*ecza+hâne*), *gülyabani* (*gül+yabânî*), *kahvehane* (*kahve+hâne*), *kütüphane* (*kutub+hâne*), *maslahatgüzar* (*maslahat+güzar*), *menfaatperest* (*menfaat+perest*), *menfaatperver* (*menfaat+perver*)<sup>15</sup>:

բ) Արաբերեն բառից և պարսկերեն ածանցից կազմված բառեր. առկա է պարսկական ածանցների մի ստվար ցանկ, որոնք, ժամանակին օրգանիկ կերպով միավորվել են արաբական

<sup>13</sup> Özkan N., “Türkçedeki yabancı unsurları tasnif denemesi”, s.1349 <https://goo.gl/obZF8Y>

<sup>14</sup> Dursunoğlu H., նույն տեղում

<sup>15</sup> H. Dursunoğlu, Türkiye Türkçesindeki Arapça sözcükler ve bu sözcüklerdeki ses olayları, s. 519-520. <https://goo.gl/iMdP95>

արմատների հետ, կազմելով նորանոր բառեր: Ստորև ներկայացված են ամենահաճախ հանդիպող ածանցներով կազմված բազմաթիվ բառերից մեկական օրինակներ՝ *acizane* (*āciz+āne*), *cüretkar* (*curet+kār*), *dindar* (*dīn+dār*), *esrarenğiz* (*esrār+engīz*), *esrarkeş* (*esrār+keş*), *felaketzede* (*felaket+zede*), *gariban* (*garib+ān*), *hakaretamiz* (*hakāret+āmīz*), *hatırşinas* (*hātir+şinās*), *hayalperest* (*hayāl+perest*), *hayırperver* (*hayir+perver*), *hizmetkar* (*hizmet+kār*), *hükümdar* (*hukum+dār*), *hükümran* (*hukum+rān*), *ikametgah* (*ikamet+gāh*), *kabristan* (*kabr+istān*), *kalemtıraş* (*kalem+terāş*), *kalpazan* (*kalb+zen*), *kimyager* (*kimyā+ger*), *kumarbaz* (*kumar+bāz*), *maslahatgüzar* (*maslahat+guzār*), *minnettar* (*minnet+tār*), *seferber* (*sefer+ber*), *silahşor* (*silāh+şor*)<sup>16</sup>:

զ) Արաբերեն բառից և պարսկերեն կապից բաղկացած բառեր. օրինակ՝ *belki* (*bel+ki*), *mademki* (*mādām+ki*):

Պարսկերեն և արաբերեն փոխառություններից կազմված բառեր: Այս խմբի մեջ ևս կան բառաբարդման երեք տեսակներ:

ա) Պարսկերեն և արաբերեն արմատներից կազմված փոխառություններ.

*Abihayat* (*āb+hayāt*), *beddua* (*bed+dua*), *cihanşümül* (*cihān+şümül*), *çarkıfelek* (*çarh+felek*), *derhal* (*der+hāl*), *divanıharp* (*divān+harb*), *hemcins* (*hem+cins*), *hemfikir* (*hem+fikir*), *hemhal* (*hym+hal*), *hoşsohbet* (*hoş+sohbet*), *serhat* (*ser+hadd*), *şaheser* (*şāh+eser*), *şebiarus* (*şeb+arūs*)<sup>17</sup>:

բ) Պարսկերեն նախածանցից և արաբերեն բառից կազմված բառեր.

<sup>16</sup> M. Kanar, Osmanlı Türkçesi sözlüğü, Say Yayınları, 2011.

<sup>17</sup> H. Dursunoğlu, Türkiye Türkçesindeki Arapça sözcükler ve bu sözcüklerdeki ses olayları, s. 520 <https://goo.gl/iMdP95>

---

*Bertaraf* (*ber+taraf*), *bihaber* (*bî+haber*), *bitaraf* (*bî+taraf*) ,  
*namağlup* (*nâ+mağlûb*), *namahrem* (*nâ+mahrem*), *pürdikkat*  
(*pur+dikkat*)<sup>18</sup>:

զ) Պարսկերեն բառից և արաբերեն ածանցից կազմված բառեր.

*Destani* (*destân+i*), *turuncu* (*turunc+i*), *narenciye* (*nârenc+iyye*),  
*peşinat* (*pîşîn+ât*):

Կան իտալերեն և պարսկերեն բաղադրիչներից կազմված բառեր, օրինակ՝ *birahane* (*birra+hâne*), *kaptanıderya* (*capitan+deryâ*), *kasadar* (*cassa+dâr*), *pastane* (*past+hâne*), *postane* (*posta+hâne*):

Ֆրանսերեն և պարսկերեն բաղադրիչներից կազմված բառեր, օրինակ՝ *bankerzede* (*banquier+zede*), *dövizzede* (*devise+zede*), *fotoğrafhane* (*photographe+hâne*):

Առկա է նաև հայերենի և պարսկերենի համադրությամբ մեկ փոխառություն, որը շատ լայն կիրառություն ունի, այն է՝ *haçvari* բառը:

Այսպիսով՝ պարսկերենից փոխառված բառերը թուրքերենում բավական մեծ թիվ են կազմում: Բացի բառային փոխառություններից թուրքերենին են անցել շարահյուսական կառույցներ, որոնք ժամանակակից թուրքերենում հանդիպում են քարացած արտահայտությունների կազմում: Պարսկերենից փոխառված բառերն ու ածանցները նաև մասնակցել են թուրքերենի բառակազմական գործընթացին: Այդ ամենը հաշվի առնելով՝ նշանակալի դեր ունի պարսկական բազմաբնույթ փոխառությունների քննությունն ու դասակարգումը՝

---

<sup>18</sup> H. Dursunoğlu, Türkiye Türkçesindeki Farsça Sözcükler ve Kullanım Şekilleri, Atatürk Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi 2009 13 (1).

օրինաչափությունների միջոցով դրանք ավելի հեշտ ընկալելու և դրանց էությունը հասկանալու համար:

## **ON THE PECULARITIES OF IRANIAN BORROWINGS IN TURKISH**

(Summary)

*Vardanyan Iren*

This article is devoted to the Iranian linguistic borrowings in Turkish. The loanwords are very diverse from the semantic point of view. Apart from loanwords there are also syntactical structures borrowed from Persian which can be found as a part of stable phrases. The loanwords, adopted prefixes and suffixes had their participation in word formation processes in Ottoman period. By taking into consideration all the above mentioned facts, it is very important the examination and classification of the Iranian borrowings in Turkish in order to understand their main points through the elaboration of regularities.

## **ОБ ОСОБЕННОСТЯХ ИРАНСКИХ ЗАИМСТВОВАНИЙ В ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ**

(резюме)

*Варданян Ирен*

Статья посвящена иранским заимствованиям в турецком языке. Заимствованные слова очень разнообразны с семантической точки зрения. Кроме слов были так же заимствованы синтаксические структуры, которые встречаются в современном турецком языке в составе устойчивых выражений. Слова, приставки и суффиксы проникшие из персидского в турецкий язык участвовали в формировании слов в Османский период. Исследование и классификация персидских заимствований в турецком языке очень важны, для лучшего понимания их сущности и закономерностей.